ԱՆԴԱՐՁ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Իմ անցած կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նման,
Ձըրույց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական։

5 Մինն ասում էր.– Ես ունեի
Թարմ ու բուրյան ծաղիկներ,
Ու բոլորը մարդկանց տըվի
Գարնան գըրկովն առատաբեր։

Մյուսն ասում էր.– Ես ունեի
10 Շատ ըզգացմունք ու կորով,
Ու ողջ ես էլ նըրանց տըվի
Սիրանըվեր երգերով։

Մինն ասում էր.– Ես թողեցի
Ձըմե՛ռ ու սև՛ էն հովտում։
15 Մյուսն ասում էր.– Ես թախծալի
Մի սիրտ բեկված ու տըրտում։

Մինը ասավ.– Բայց կըծաղկի
Էն հովիտը նորից նոր։
Մյուսը էստեղ ոչինչ չասավ,
20 Ու գնում էր գլխակոր...

Էսպես իմ կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նման,
Ձըրույց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական։